ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

27-3/433-2020 2020-02-27

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի պատասխան Ձեր 19/12/2019թ. թիվ NG-02-443-1912 գրության՝ քննության առնելով «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի (այսուհետ՝ Կարգ)» նախագծի (այսուհետ՝ նաև Նախագիծ) վերաբերյալ Ձեր կողմից ներկայացված դիտարկումները՝ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 5-րդ կետ: Դրամաշնորհի տրամադրման սկզբունքների վերաբերյալ:

Գտնում ենք, որ 5-րդ կետում նշված սկզբունքները կարելի է կիրառել, ոչ միայն դրամաշնորհների հատկացման գործընթացի, այլ նաև ՀՀ պետական բյուջեից տրամադրվող գրեթե բոլոր ֆիանանսական միջոցների (ծախսերի) նկատմամբ, և դրանք արդեն իսկ սահմանված են ՀՀ կառավարության ծրագրով, ՀՀ կառավարության 28.12.2019թ. թիվ 1716-Լ որոշմամբ հաստատված Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությամբ, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, և ավելորդ կրկնություններից խուսափելու նպատակով Կարգում դրանք լրացուցիչ սահմանելու անհրաժշտություն չկա:

2. Նախագծի 6-րդ կետ: Դրամաշնորհի հատկացման մրցութային հանձնաժողովի անդամների թվի և կազմի մասով Ձեր կողմից առաջարկվում է Նախագծում նշել, որ՝ «... պետական մարմնի ղեկավարը կազմավորում է տվյալ դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ առնվազն 5 և առավելագույնը 9 անդամից բաղկացած մրցույթային հանձնաժողով, որի մեջ մտնում են մրցույթ հայտարարած գերատեսչության մեկ ներկայացուցիչ, ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի և դրամաշնորհատու տեղական կամ միջազգային կազմակերպություններից մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև անկախ (ոլորտային կամ ծրագրերի մշակման ու կառավարման) փորձագետներ՝ ըստ համաձայնության:....»:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված դրամաշնորհների տրամադրման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծով առաջարկվում է սահմանել մրցույթի հանձնաժողովի նվազագույն թվաքանակ՝ հինգ անդամից: Իսկ հանձնաժողովի անդամների առավելագույն թվի սահմանման հետ կապված՝ գտնում ենք, որ ելնելով տվյալ ոլորտի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհի առանձնահատկությունից, ինչպես նաև դրա բնույթից և ծավալից, պետական մարմնի ղեկավարը ինքը պետք է որոշի անդամների առավելագույն

թիվը: Ինչ վերաբերվում է հանձնաժողովի կազմին՝ կարծում ենք, որ մրցույթի հանձնաժողովը պետք է ձևավորվի հայտերը կազմելու և գնահատելու կարողություն ունեցող անդամներից՝ անձանցից: Մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի նախագծով սահմանված է, որ հանձնաժողովի անդամը պետք է ունենա դրամաշնորհի տրամադրման տեխնիկական առաջադրանքը, ինչպես նաև մրցույթի մասնակից կազմակերպությունների (այսուհետ՝ մասնակից) որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է դրամաշնորհային ծրագրին համապատասխան: Եթե պետական մարմնի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

3. Նախագծի 9-12-րդ կետեր: Փորձագետների շտեմարան ստեղծելու և վերջիններին ընտրելու վերաբերյալ:

Նախագծի 6-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կազմում պետք է ներառվեն նաև անկախ փորձագետներ: Նախագծով նախատեսվում է, որ անկախ փորձագետների ընտրությունը պետք է կատարվի ՀՀ կառավարության կողմից նախապես ձևավորված փորձագետների շտեմարանից, որն առկա է Կարգով նախատեսված՝ գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման համար ստեղծված միասնական պաշտոնական կայքում: Ընդ որում, համաձայն նախագծի՝ եթե կան մի քանի փորձագետներ, ովքեր իրենց ոլորտներով համապատասխանում են տվյալ ծրագրին, ապա փորձագետների նշանակման ժամանակ նախապատվությունը տրվում է այն փորձագետներին, ովքեր իրենց փորձառությամբ առավելապես համապատասխանում են տվյալ ծրագրին, կամ առ այդ պահը համեմատաբար փոքր թվով ծրագրեր են գնահատել:

Վերը նշվածը հստակեցման կարիք ունի: Օրինակ, պարզ չէ, որ եթե բոլոր հավասար պայմաններում առկա է հիշյալ պայմանը բավարարող մեկից ավելի փորձագետեր, ապա ինչպես է իրականացվում ընտրությունը: Միաժամանակ, պարզ չէ շտեմարանում համապատասխան ոլորտի փորձագետի բացակայության դեպքում ինչ կարգով պետք է հանձնաժողովի կազմում ներգրավի համապատասխան փորձագետ: Բացի այդ, Նախագծի 12-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր մրցույթի ընթացքում փորձագիտական գնահատական տալու համար փորձագետին վճարվում է հոնորար՝ քսան հազար դրամ (ներառյալ ֆիզիկական անձանցից պահվող հարկերն ու վճարները), ինչը կարծում ենք հիմնավորված չէ:

Մեր կարծիքով հանձնաժողովում համապատասխան փորձագետ (մասնագետ) պետք է ներգրավի (հրավիրվի) միայն այն դեպքում, եթե պետական մարմնի ներկայացուցիչները (մասնագիտական խմբի անդամները) չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ:

4. Նախագծի 16-րդ կետ: Լիովին համաձայն ենք Ձեր առաջարկության հետ՝ կապված հանձնաժողովի անդամների և մրցույթի մասնակիցների մերձավոր ազգակցությամբ կապված անձանց հստակեցման հետ: Ավելին, ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի նախագծում դա հստակ սահմանված է, ինչպես նաև նշված է, որ ոչ միայն հանձնաժողովի անդամը, այլ նաև հրավիրված փորձագետը (մասնագետը) և քարտուղարը չեն կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ հայտ է ներկայացրել այնպիսի մասնակից, որին անդամակցում է տվյալ կամ վերջինիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր): Եթե առկա է նման պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը, հրավիրված փորձագետը (մասնագետը) կամ քարտուղարը

ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Այդ անձիք ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրության հետ մեկտեղ հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

5. Նախագծի 20-րդ կետի «ե» ենթակետ: Կարծում ենք, որ հանձնաժողովի անդամը և քարտուղարը կարող են իրականացնել միայն ՀՀ օրենդրությամբ իրենց վերապահված լիազորություններ, և դրանք ամրագրված են համապատասխան իրավական ակտերով և հիշյալ ենթակետում «գրավոր կերպով» բառերը լրացուցիչ նշելու անհրաժեշտություն չկա:

6. Նախագծի 26-րդ կետ: Կետում հստակ սահմանված է մրցույթի հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու ժամկետը, որը չի հակասում «Տեղեկատվական ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին և ժամկետներին: Ուստի գտնում ենք, որ լրացուցիչ օրենքին հղում տալու անհրաժեշտություն չկա:

7. Նախագծի 30-րդ կետ: Համաձայն գործող կարգի 20-րդ կետի «ը» ենթակետի՝ մրցույթի հայտերի բացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է նշվի մրցույթի հրավերում: Իսկ Կարգի 29-րդ կետում հստակ նշված են հայտերի բացման նիստում իրականացվող գործողությունները:

8. Նախագծի 31-րդ կետ: Համատեղ գործունեությամբ (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում ներկայացված առաջարկությունը ընդունել է մեր կողմից: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի նախագծով առաջարկվում է գործող կարգում ավելացվել դրույթներ դրա վերաբերյալ, որտեղ նշվում է, որ հրավերով սահմանվում է, որ «....համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն մրցույթին ներկայացնել առանձին հայտ: Սույն ենթակետի պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը»: Միաժամանակ նշենք, որ կարգի նախագծով հստակեցվել են նաև հայտում փոփոխություն կատարելու ընթացակարգը:

9" Նախագծի 38-րդ կետ: Հայտերի գնահատման ժամնետների ավելացման վերաբերյալ դիտարկումը ընդունելի է: Ավելին ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի տարբերկում նշված է, որ «...Հանձնաժողովի անդամները հայտերի բացման նիստում որոշված ժամկետում, որը չի կարող պակաս լինել երեք աշխատանքային օրվանից, մրցույթի հրավերով սահմանված կարգով գնահատում են մրցույթի մասին հայտերը և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով մրցութային առաջարկների վերաբերյալ եզրակացություն են տալիս ու ստորագրում և քարտուղարին են փոխանցում գնահատման թերթիկների մեկական օրինակները:»:

10. Նախագծի 39-րդ կետ: Կոռուպցիոն ռիսկերի առաջացմամբ պայմանավորված փորձագետներին հանձնաժողովի անդամներից տարանջատելու վերաբերյալ առաջարկության վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի նախագծով հստակեցված են հանձնաժողովի անդամի և քարտուղարի պարտականությունների չկատարման դեպքում վերջիններիս պատասխանատվության ենթարկելու դրույթները: Մասնավորապես՝ նախագծով սահմանված է, որ «....հանձնաժողովի անդամի կամ քարտուղարի կողմից իր պարտականությունների չկատարումը, ինչպես նաև հանձնաժողովի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ հանձնաժողովի գործունեությանը միջամտությունը հանգեցնում են այդ անդամին (պաշտոնատար անձին) ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը: Անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև հաղթողին որոշելու հիմնավորվածության համար»:

11. Նախագծի 41-րդ կետ: Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինելու, վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված կարգի նախագծով նախատեսված է դրույթ, համաձայն որի՝ հանձնաժողովի նիստին վերջինիս մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

12. Նախագծի 43-րդ կետի «գ» ենթակետ: Նախագծով առաջարկվող երեքից պակաս հայտեր ներկայացնելու դեպքում մրցույթը չկայացված համարելու վերաբերյալ Ձեր կողմից ներկայացված նկատարումը ընդունելի է, և կարծում ենք, որ դա իրոք կարող է խնդրահարույց լինել և խոչընդոտել դրաաշնորհային ծրագրի իրականացմանը:

13. Նախագծի 45-րդ կետ: Կազմակեպության (իրավաբանական անձի) կողմից պայմանագրի կնքման եզրույթը հանելու վերաբերյալ առաջակությունը ընդունելի է՝ հաշվի առնելով, որ կնիքի առկայությունը օրենքով պարտադիր չէ:

14. Նախագծի 31-րդ, 48-րդ և 52-րդ կետերի վերաբերյալ՝ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված որոշման նախագծում սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ՀՀ կառավարության կողմից որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարի կողմից պետք է հաստատվի և նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակի մրցույթի ընթացքում օգտագործվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը: Ուստի մրցույթի հայտերի բովանդակությանը, պայմանագրում ներառվող դրույթների և հաշվետվությունների ներկայացման ձևաչափին և դրա բովանդակությանը վերաբերվող առաջարկությունները հաշվի կառնվեն մրցույթի ընթացքում օգտագործվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերի մշակման ժամանակ:

15. Նախագծի 49-րդ կետ: Կետով սահմանվում է, որ կազմակերպությունը, որի հետ պետք է կնքվի դրամաշնորհի հատկացման պայմանագիր, կարող է հրաժարվել պայմանագիր կնքելուց՝ դրա մասին պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով պետական մարմնի ղեկավարին: Այդ մասին «գրավոր ծանուցելու» վերաբերյալ Ձեր առաջարկության վերաբերյալ հայտնում ենք, որ պետական մարմնի և իրավաբանական անձանց միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և վերջիններիս միջև հարաբերությունները պետք է կրեն միայն պաշտոնական բնույթ, ասինքն՝ «ծանուցումը» չի կարող լինել բանավոր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ ՀՖԿ քաղաքականության վարչություն
Հեռախոս՝ 011800256

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹ

Գ.Կիևն, Թումանյան 10, բն.7

«Հոյ Արուեստ» ՀՁ Տեղեկատվ.

պրոֆ. Ամիրշ Գասպարյանին

ԵԼՔԻ No 27-3/433-2020

RR

RR278668212AM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 1

МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАН, УЛ. МЕЛИК АДАМЯНА 1

դիմեցնելիության վերաբերյալ վշտանք է ճանգիր ՇԵՄԻ ԱՄԻՄԻԵՆ վրդումը դիմումագիր ‘ճվլիմիջ
ի ճվելիանդ բան դրա ոգեհնդ ‘ճվդրսթեհսիտոպոդջդրտա վկանաշորոմա նախմնոդրոմանը
բոանգիրոորոմհ.ՀՇ. ևուևնև Լոմիր իոնոոր ևս ‘ՀԵՈ ուսուսի օոմիհոի ասոս ոոոոոուսոո մեթ
դիմեցնելիությունը
վինանքա
վերաբերյալ
բնթիրոս

տոոշ սի
ոգեհնդ
ասոտոպ
դոմեթիսի
ջոցոմիլ
դոդրցոմ
...» սա
վինանքա

դանգրոդ
եանգիր
<<»
դոդրսոմ
դոմեթիսա
ՀՇ
ճեղոմ
ճվգճնսեմ
ոլոմի

ձեզ ոլ
դոոշ
ճոդոդրդ
ջոմիցոմ
իանգրոդ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒՄ
ՀՈԴԱՄԱՍ
ՊՈՒՄԲԱՐԱԿՈՒՄ

132
n.am

24 JAN 2023